ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2018 թվականի N 12

ԱՐՄԻՆԵ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի երկրորդ ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ***.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմինե Ռաֆիկի Զաքարյանին (ծածկագիր՝ 1.2-1) շնորհել իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2018 թ. փետրվարի 19

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2018 թվականի N 13

ԳԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. մայիսի 18-ի N 912–Ն որոշման պահանջները, ինչպես նաև քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի), հողաշինարարի որակավորման վկայական (N 045) ստացած անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը՝ ***որոշում եմ.***

1. Գարիկ Մայիսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 8-րդ փողոց N 32 հասցեում գտնվող 0.07996 հա բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 92.75 քմ արտաքին մակերեսով շինությունները՝ 58.37 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 10.23 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը և 24.15 քմ արտաքին մակերեսով լողավազանը ճանաչել օրինական, քանի որ.
   1) դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
   2) դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 58.37 x 1300 ≈ 75880 /յոթանասունհինգ հազար ութ հարյուր ութսուն/, 10.23 x 780 ≈ 7980 /յոթ հազար ինը հարյուր ութսուն/, 24.15 x 780 ≈ 18840 /տասնութ հազար ութ հարյուր քառասուն/ (ընդամենը՝ 102700 /մեկ հարյուր երկու հազար յոթ հարյուր/) դրամի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ նշված շինությունները գնահատելու և պետական գրանցման տալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2018 թ. փետրվարի 21
գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2018 թվականի N 14

2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-ԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԼԻԱՆԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2012 թ. մարտի 07-ի N 09-Ն որոշումը, ինչպես նաև համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման գործընթացը կազմակերպող աճուրդային հանձնաժողովի կողմից 2018 թվականի փետրվարի 23-ին կայացած աճուրդի արդյունքները՝ ***որոշում եմ.***

1. 2018 թվականի փետրվարի 23-ին կայացած աճուրդ-վաճառքում հաղթող ճանաչված Լիանա Միրաբի Ղուկասյանի հետ 0046-0022 ծածկագրի 0.08 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ կնքել առուվաճառքի պայմանագիր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2018 թ. փետրվարի 23

գ. Նոր Արտամետ